Արձանագրություն N 4

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարիքների համար՝ «ՀՀ Գեղարքունիքի մարզի Ներքին Գետաշեն համայնքի համար խորքային հորի հորատման» աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/17-1 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «02» «մայիսի» 2019թ.

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳՊ/ԳԱՊ)	Սամվել Առաքելյան
Հանձնաժողովի անդամներ՝ 1.Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ)	Էդուարդ Ջանջուղազյան
2.Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ)	Գևորգ Խրիմյան
3.Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ)	Արթուր Սողոմոնյան
4.Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ)	Լիլիթ Սեդրակյան
5.Գնման Պատասխանատու/ Մրցույթի համակարգող (ԳՊ/ՄՀմ)	Արեգ Եղիյան

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի բոլոր անդամները՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Նիստը տեղի ունեցավ 2019 թվականի ապրիլի 30-ին, ժամը՝ 11:00-ին:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Սամվել Առաքելյանը, իսկ քարտուղարն էր՝ Արեգ Եղիյանը:

ՕՐԱԿԱՐԳ

Որոշվեց՝

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1.1 ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/17-1 ծածկագրով ընթացակարգի պայմանագիր կնքելու առաջարկը չընդունած մասնակցի մասին որոշման մասին,

1.2 ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/17-1 ծածկագրով ընթացակարգի հաջորդաբար 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից որոշելու մասին

1.3 Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

Կողմ՝ 5, դեմ՝ 0

1. ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/17-1 ծածկագրով ընթացակարգի պայմանագիր կնքելու առաջարկը չընդունած մասնակցի մասին որոշման մասին

Հանձնաժողովն արձանագրեց, որ՝

- «Ատլանտ» ՍՊԸ-ին ս.թ. ապրիլի 5-ին ուղարկվել է ծանուցում պայմանագիր կնքելու առաջարկ: Սահմանված 15 աշխատանքային օրվա ընթացքում «Ատլանտ» ՍՊԸ-ն պայմանագիր չի ներկայացրել: Պայմանագիր կնքելու վերջնաժամկետին՝ ս.թ. ապրիլի 26-ին, «Ատլանտ» ՍՊԸ-ն հիմնադրամին ներկայացրեց մի գրություն նախահաշվի հորատման բաժնում նախագծային փոփոխություն կատարելու խնդրանքով, որին ի պատասխան ս.թ. ապրիլի 29-ին հիմնադրամի կողմից ուղարկվել է պատասխան գրություն, որով «Ատլանտ» ՍՊԸ-ին հայտնվել է, որ նշված փոփոխությունը չի մտնում հիմնադրամի իրավասության շրջանակների մեջ: Ուստի «Ատլանտ» ՍՊԸ-ն հրաժարվել է պայմանագիր կնքել հիմնադրամի հետ:

Որոշվեց՝

1. Դիմել ՀՀ ՖՆ գրությամբ սահմանված կարգով ընթացք տալ «Ատլանտ» ՍՊԸ-ին ընդգրկելու գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ հիմք ընդունելով Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի Բ ենթակետը:

Կողմ՝ 5, դեմ՝ 0

2. ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/17-1 ծածկագրով ընթացակարգի հաջորդաբար 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից որոշելու մասին

Հանձնաժողովն արձանագրեց, որ՝

1. «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/17-1» ծածկագրով Չափաբաժին 1-ի մասով մրցույթի 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից հայտարարել բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին 1-ին չափաբաժինի մասով **Վանդ ԳԱՍՍ ՍՊԸ**-ին:

Որոշվեց՝

1. **Վանդ ԳԱՍՍ ՍՊԸ**-ին ծանուցել, որ հրավերով սահմանված կարգով ծանուցումը ստանալու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային ձևով ներկայացնի հրավերով պահանջվող փաստաթղթերը՝ ուղարկելով Պատվիրատուի

հետևյալ էլեկտրոնային հասցեով՝ a.yeghiyan@atdf.am՝ հաստատելով դրանք էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

2. Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել՝ «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/17-1» ծածկագրով ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի մասին պահանջվող տեղեկատվությունը ստանալու նպատակով:

Կողմ՝ 5, դեմ՝ 0

Կողմ՝ 5, դեմ՝ 0

3. **Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին**

Որոշվեց՝

1. «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/17-1» ծածկագրով ընթացակարգի հայտերի գնահատման նիստը անցակցնել ընտրված մասնակցի որակավորման փաստաթղթերը քարտուղարի կողմից գնահատող հանձնաժողովին տրամադրվելուն հաջորդող աշխատանքային օրը, ժամը՝10:00-ին, ՀՏՁՀ գրասենյակի շենքում. հասցեն՝ ՀՀ, ք.Երևան, Ուլնեցի 31., 4-րդ հարկ:

Կողմ՝ 5, դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Սամվել Առաքելյան

Հանձնաժողովի անդամներ՝

Էդուարդ Ջանջուղազյան

Գևորգ Խրիմյան

Արթուր Սողոմոնյան

Լիլիթ Սեդրակյան

քարտուղար՝

Արեգ Եղիյան